ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Աննա Խաչատրյան
ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության
Կ. Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի պահպանության
բաժնի ոստիկանության վաշտի երկրորդ դասակի հրամանատար,
ոստիկանության ավագ լեյտենանտ

Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու օրենքով նախատեսված պայմաններից մեկը այն խոչընդոտող հանգամանքների բացակայությունն է: Այդ հանգամանքներն են՝

1. քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների ընթացքի ընդհատումը,
2. քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների կասեցումը,
3. վաղեմության ժամկետների կիրառման սահմանափակումները:

Քննարկենք դրանք առանձին-առանձին:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից»: Սա նշանակում է, որ նախորդ հանցանքի համար ընթացող վաղեմության ժամկետը զրոյանում է և սկսում է ընթանալ սկզբից:

Կարծում ենք, որ վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման հիմք պետք է լինի ոչ միայն միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանքի կատարումը, այլև ցանկացած տեսակի հանցանքի կատարումը: Գործող իրավական կարգավորման պարագայում ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելու դեպքում նախորդ հանցագործության համար սահմանված վաղեմության ժամկետի չընդհատվելը չի բխում օրենքի առջև հավասարության սկզբունքի պահանջներից:

Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը անձի և նրա կատարած արարքի հանրային վտանգավորության կորուստն է: Իսկ եթե վաղեմության ժամկետի ընթացքի ժամանակ անձը կատարում է նոր հանցանք, ապա, անկախ հանցանքի ծանրությունից, դա արդեն կասկածի տակ է դնում նրա ուղղման փաստը և նրան քրեական պատասխանատվությունից ազատելու նպատակահարմարությունը:

Ելնելով դրանից, առաջարկում ենք քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ընդհատման հիմք դիտել ցանկացած տեսակի հանցանքի կատարումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրելով հետևյալ կերպ. «Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքը ավարտված համարելու պահից»:

Ինչ վերաբերում է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության

ժամկետի կասեցմանը, ապա, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դատից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից:

Վաղեմության ժամկետի կասեցումը նշանակում է, որ վաղեմության ժամկետի հոսքը սառեցվում է այն պահից, երբ հանցանք կատարած անձը, գիտակցելով, որ իրավապահ մարմինները կասկածում են իրեն կատարված հանցագործության մեջ, չի ներկայանում քննության կամ դատարան: Խոսքը վերաբերում է ոչ միայն կասկածյալին, այլև մեղադրյալին կամ ամբաստանյալին, ինչպես նաև յուրաքանչյուր անձի, ով նման կարգավիճակ չունի, սակայն գիտակցում է, որ իրավապահ մարմինները կասկածում են իրեն: Անձը չի կարող դիտվել քննությունից կամ դատից խուսափող, եթե նրա կատարած հանցանքի մասին հայտնի չէ իրավապահ մարմիններին, ինչպես նաև պարզված չէ նրա՝ հանցագործությանը առնչվելու փաստը[1]:

Քննությունից և դատից խուսափելը նշանակում է, որ անձը կատարում է դիտավորյալ գործողություն կամ անգործություն քրեական պատասխանատվությունից խուսափելու համար, որով իրավապահ մարմիններին ստիպում է ձեռք առնել միջոցներ իրեն հետախուզելու և հայտնաբերելու համար: Որպես քննությունից և դատից խուսափել կհամարվի, օրինակ, բնակության վայրը, անուն-ազգանունը, արտաքինը փոխելը, ուրիշի անվան տակ կեղծ անձնագրով այլ վայրում բնակվելը[2]:

Եթե անձը հանցանք կատարելուց հետո փոխել է բնակության վայրը, լքել է երկիրը, սակայն իրավապահ մարմիններին հայտնի չէ նրա կողմից կատարված հանցանքի կամ այդ հանցանքը նրա կողմից կատարված լինելու փաստի մասին, ապա դա չի կարող դիտվել որպես պատժից և պատասխանատվությունից խուսափել[3]:

Վաղեմության ժամկետը կասեցվում է այնքան ժամանակով, քանի դեռ անձը խուսափում է քննությունից կամ դատից: Վաղեմության ընթացքը վերսկսվում է հանցավորին ձերբակալելու կամ նրա մեղայականով ներկայանալու պահից:

Կարևոր է շեշտել, որ կասեցված վաղեմության ժամկետի ընթացքը վերսկսվում է ոչ թե այն պահից, երբ անձը դադարել է խուսափել քննությունից և դատից, այլ նրան ձերբակալելու կամ մեղայականով ներկայանալու պահից: Նման օրենսդրական կարգավորումը պայմանավորված է նրանով, որ գործնականում չափազանց դժվար կլիներ պարզել այն պահը, երբ անձը դադարել է խուսափել քննությունից և դատից[4]:

ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է, որ նույնիսկ վաղեմության ժամկետը կասեցված լինելու պարագայում անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե անցել են այդ իրավիճակի համար սահմանված վաղեմության ժամկետները: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. « (…) անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասը տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից՝ քսան տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ»:

---

[1] Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: ԵՊՀ հրատարկչություն: Երևան, 2007, էջ 480:

[2] Տե՛ս Նույն տեղում:

[3] Տե՛ս Постановление Пленума Верховного Суда СССР от 4 марта 1929 г. “Об условиях применения давности и амнистии к длящимся и продолжаемым преступлениям”. Сборник постановлений Пленумов Верховного Суда Российской Федерации (СССР, РСФСР) по уголовным делам. – М., 2000, էջ 87:

[4] Տե՛ս **Прошляков Д.** Освобождение от уголовной ответственности в связи с истечением сроков давности. Журнал “Российская юстиция”. – 2000. - №9, էջ 21:

Ք. Արսենյանը գրում է, որ քննությունից կամ դատից խուսափող անձն իրենից ավելի մեծ հանրային վտանգավորություն է ներկայացնում, և նրա ուղղված լինելը, հանրային վտանգավորության կորուստը ու այդ հիմքով պատժի աննպատակահարմարությունը հավաստելու համար ավելի երկար ժամանակ է հարկավոր[1]:

Իրավաբանական գրականության մեջ նույնիսկ առաջարկություն է արվել այս դեպքերում ընդհանրապես բացառել վաղեմության ժամկետի կիրառումը: Նման արմատական դիրքորոշումը ընդունելի չէ: Վաղեմության ժամկետը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում հանցանք կատարած անձն ապացուցում է իր հանրային վտանգավորության կորուստը, իր ուղղված լինելը: Այդպիսի հնարավորություն պետք է տալ նաև այն անձին, ով խուսափել է քննությունից կամ դատից: Հակառակ դեպքում, ինչպես արդարացիորեն նշվում է մասնագիտական գրականության մեջ, հանցանք կատարած անձը զրկվում է որևէ հնարավորությունից, և կատարած հանցանքը դառնում է նրա ճակատագրի անելանելի վերջը: Ուստի, եթե քննությունից կամ դատից խուսափող անձը օրենքով նախատեսված ժամանակահատվածում նոր հանցանք չի կատարել, ապա պետք է ելնել այն կանխավարկածից, որ նա ուղղվել է ու կորցրել իր հանրային վտանգավորությունը:

Քանի որ մեր կողմից առաջարկվել է վերանայել ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի առաջին մասով սահմանված վաղեմության ժամկետները, ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է ավելի երկար վաղեմության ժամկետներ սահմանել նաև այն դեպքերի համար, երբ անձը խուսափում է քննությունից և դատից: Մասնավորապես, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասի համապատասխան դրույթը շարադրել հետևյալ կերպ. « (…) անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասնհինգ տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից՝ երեսուն տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ»:

Խոսելով քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետների կասեցման մասին, պետք է նշել, որ որոշ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ որպես վաղեմության ժամկետի կասեցման հիմք նախատեսված է նաև անձի՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվելու փաստը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի համաձայն՝ քրեական գործով վարույթը դատախազի, քննիչի կամ դատարանի որոշմամբ ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցվել, եթե մեղադրյալը կամ այն անձը, որին գործով որպես մեղադրյալ ներգրավելու բավարար հիմքեր կան, օգտվում է քրեական հետապնդման ենթարկվելու անձեռնմխելիությունից:

Այդ հարցին անդրադարձ է կատարված ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի նախագծում, որում նշված է հետևյալը. «Ինքնուրույն խնդիր է անձեռնմխելիությունից օգտվող անձանց կողմից կատարած արարքների համար վաղեմության ժամկետների հաշվարկումը: Մի կողմից ստացվում է, որ անձեռնմխելիության իրավունքից օգտվող անձին հնարավոր չէ այդ ընթացքում քրեական պատասխանատվության ենթարկել, քանի դեռ չկա ԱԺ-ի համապատասխան որոշումը, մյուս կողմից էլ՝ վաղեմության ժամկետի կասեցման հիմք չկա, ինչն էլ փաստացի հանգեցնում է

[1] Տե՛ս **Ք. Արսենյան,** Քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու վաղեմության ժամկետների օրենսդրական սահմանման մի քանի հարցեր//Պետություն և իրավունք, թիվ 2, 2011, էջ 43:

պատասխանատվության անհնարինության: Հարցի լուծման տարբերակ է օրենսդրորեն ամրագրումը, որ անձեռնմխելիության իրավունք ունեցող անձի կողմից կատարված հանցանքի հայտնի լինելու պարագայում վաղեմության ժամկետը կասեցվում է՝ մինչև այդ անձի՝ անձեռնմխելիության իրավունքից զրկելը կամ այդ իրավունքի դադարումը»:

Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելը իմպերատիվ բնույթ է կրում, այսինքն՝ այն կիրառվում է անկախ իրավակիրառողի հայեցողությունից: Եթե օրենքով սահմանված վաղեմության ժամկետներն անցել են, բացակայում են վաղեմության ժամկետի կիրառումը խոչընդոտող հանգամանքները, ապա իրավակիրառողը պարտավոր է անձին ազատել քրեական պատասխանատվությունից: Այդ պարտականության չկատարումը օրենքի էական խախտում է և կայացված դատական ակտը բեկանելու հիմք է ծառայում:

Այսպես, օրինակ, «Դեագա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը զբաղվել է պանրի մեծածախ առևտրով. Հայաստանի Հանրապետության տարբեր գյուղերի բնակիչներից ձեռք է բերել պանիր և արտահանել Ռուսաստանի Դաշնություն: Ընկերության տնօրեն է եղել Երազիկ Վարդանյանը, սակայն տնօրենի պարտականությունները փաստացի կատարել է նրա ամուսինը՝ Դանիել Ղասաբողլյանը: 2008 թվականի ամռանը ընկերությունը գյուղացիներից ձեռք է բերել 60 տոննա պանիր, որից 2 տոննան՝ Վայոց ձորի մարզի Խաչիկ գյուղի բնակիչներից: «Դեագա» ՍՊԸ-ն պանիր ձեռք բերելիս տեղում գնման ակտեր չի կազմել: 2009 թվականի սեպտեմբերի սկզբներին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի էրեբունու հարկային տեսչության աշխատակիցները «Դեագա» ՍՊԸ-ում կատարել են բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում 2009 թվականի սեպտեմբերի 9-ին կազմվել է թիվ 1004882 ակտը, և «Դեագա» ՍՊԸ-ից ՀՀ բյուջե լրացուցիչ գանձման է առաջադրվել 6.627.200 ՀՀ դրամ: Նշված գումարի վճարումից խուսափելու նպատակով Դ. Ղասաբողլյանը չլրացված գնման ակտեր է տրամադրել Կամո Գրիգորյանին և խնդրել դրանք ստորագրել տալ Խաչիկ գյուղի բնակիչներին, ովքեր 2009 թվականի աշնանը ստորագրել են դրանք: Այնուհետև Դ. Ղասաբողլյանի կողմից տրված տվյալներով Ե. Վարդանյանը լրացրել է նշված գնման ակտերն այնպես, իբր թե «Դեագա» ՍՊԸ-ն Խաչիկ գյուղի բնակիչներից գնել է 60 տոննա պանիր:

Վճռաբեկ բողոքում նշվել է, որ Վերաքննիչ դատարանը, քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում չկայացնելով, թույլ է տվել ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների խախտում: Ի հիմնավորումն ասվածի՝ բողոքաբերը նշել է, որ Դ.Ղասաբողլյանին մեղսագրվող արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին, հետևաբար այդ արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը կազմում է երկու տարի՝ հանցանքն ավարտված համարվելու պահից սկսած: Տվյալ դեպքում ամբաստանյալին մեղսագրվող հանցավոր արարքի ավարտման պահ է հանդիսանում գնման ակտերը ՀՀ վարչական դատարան ներկայացնելու օրը՝ 2010 թվականի մայիսի 11-ը, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից տվյալ գործով դատական ակտ կայացնելու օրվա դրությամբ՝ 2012 թվականի հուլիսի 30-ին, ամբաստանյալ Դ.Ղասաբողլյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած է եղել, սակայն Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի անդրադարձել դրան:

Իր որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, «Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով

նախատեսված Դ. Ղասաբողլյանին մեղսագրվող հանցանքն ավարտվել է 2010 թվականի մայիսի 11-ին՝ կեղծ գնման ակտերը ՀՀ վարչական դատարան ներկայացնելու պահից: Քրեական գործի նյութերում բացակայում է որևէ փաստական տվյալ այն մասին, որ Դ. Ղասաբողլյանը նշված արարքը կատարելուց հետո կատարել է նոր հանցանք կամ խուսափել է քննությունից կամ դատից, այսինքն՝ վաղեմության ժամկետի ընթացքը ընդհատված կամ կասեցված համարելու հիմքերը բացակայում են:

Հետևաբար Դ. Ղասաբողլյանին մեղսագրվող հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրացել է 2012 թվականի մայիսի 11-ին, և այդ օրվա դրությամբ նրա վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ չի եղել»:

Հիմք ընդունելով տվյալ որոշման 12-13-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ գործով Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտ կայացնելու պահին՝ 2012 թվականի հուլիսի 30-ին, ամբաստանյալ Դ.Ղասաբողլյանին քրեական պատասխանատվության ենթարկելու ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետն անցած է եղել:

Հետևաբար Վերաքննիչ դատարանը պարտավոր էր անդրադառնալ այդ հարցին, և այն դեպքում, եթե ամբաստանյալը չէր առարկի դրա դեմ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով կարճել քրեական գործի վարույթը և դադարեցնել ամբաստանյալ Դ. Ղասաբողլյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը, ինչը չի արել: Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ վճռաբեկ դատարանը որոշել է բավարարել վճռաբեկ բողոքը և ամբաստանյալ Դանիել Արմենակի Ղասաբողլյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի հուլիսի 30-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության[1]:

Վաղեմության ժամկետն անցնելու դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու իմպերատիվ բնույթից բացառություն է այն դեպքը, երբ կատարված հանցանքի համար օրենքով նախատեսված է ցման ազատազրկում:

Այսպես, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Վաղեմության ժամկետի կիրառման հարցն այն անձի նկատմամբ, ով ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանք է կատարել, լուծում է դատարանը: Եթե դատարանը հնարավոր չի գտնում վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով անձին ազատել քրեական պատասխանատվությունից, ապա ցմահ ազատազրկում չի կիրառվում»:

Փաստորեն, այս դեպքում վաղեմության ժամկետն անցնելը պարտադիր հիմք չէ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար. ուստի դատարանը պետք է որոշի՝ ազատե՞լ անձին քրեական պատասխանատվությունից, թե՞ ոչ: Այդ հարցի լուծման ժամանակ դատարանը պետք է հաշվի առնի հանցագործությունից հետո անցած ժամանակի տևողությունը, հանցավորի անձը և այդ ընթացքում հանցավորի վարքագիծը : Եթե դատարանը գտնի, որ անձը չպետք է ազատվի քրեական պատասխանատվությունից, ապա նրա նկատմամբ ցմահ ազատազրկում նշանակվել չի կարող: Այս դեպքում դատարանը պետք է նշանակի տվյալ հանցագործության համար նախատեսված՝ որոշակի ժամկետով ազազատրկման ձևով պատիժ՝ ղեկավարվելով պատժի նշանակման ընդհանուր կանոններով:

---

[1] Տես ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի նոյեմբերի 1-ի որոշումը Դանիել Ղասաբողլյանի վերաբերյալ գործով:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 5-րդ մասում տրված իրավական կարգավորումը պարունակում է դատական կամայականության ռիսկեր, և ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանքների համար անհրաժեշտ է բացառել դատական հայեցողությունը՝ սահմանելով, որ ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանքների համար վաղեմության ժամկետներ չեն կիրառվում:

Քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետների կիրառման սահմանափակում նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասում, որի համաձայն՝ «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 384-րդ, 386-391-րդ, 393-397-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում: Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված»:

Առաջարկում ենք վերոնշյալ իրավական դրույթում կատարել լրացում և ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 384-րդ, 386-391-րդ, 393-397-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ, ինչպես նաև ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում: Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված»:

Այսպիսով, վաղեմության ժամկետների կիրառումը խոչընդոտող հանգամանքները, մասնավորապես վաղեմության ժամկետների հոսքի ընթացքում անձի կողմից նոր հանցանք կատարելու, ինչպես նաև քննությունից և դատից խուսափելու իրադրությունները սահմանող քրեաիրավական նորմերի վերլուծության հիման վրա ներկայացնում ենք այդ նորմերի կատարելագործմանն ուղղված հետևյալ օրենսդրական առաջարկությունները՝

1. ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ կերպ. «Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքը ավարտված համարելու պահից»:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը շարադրել հետևյալ կերպ. «Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասնհինգ տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից՝ երեսուն տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ»:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 384-րդ, 386-391-րդ, 393-397-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ, ինչպես նաև ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում: Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված»:

ПОСЛЕДСТВИЯМИ ОСВОБОЖДЕНИЯ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ПО ИСТЕЧЕНИИ СРОКА ДАВНОСТИ

Анна Хачатрян
Командир второго взвода полицейской роты общественной охраны Метрополитена имени К. Демирчяна управления города Еревана полиции Республики Армения, старший лейтенант

В статье проведено исследование ряда вопросов, связанных с последствиями освобождения от уголовной ответственности по истечении срока давности. Автор подверг анализу закрепленные в уголовном кодексе Армении препятствующие обстоятельства, последствия освобождения от уголовной ответственности по истечении срока давности, предусмотренные в уголовно-правовой норме. В статье по отдельности подверглись анализу следующие препятствующие обстоятельства последствия освобождения от уголовной ответственности: прерывание процесса уголовной ответственности по истечении срока давности, приостановление и ограничение применения срока давности. В заключительной части статьи автор представляет собственную позицию по отдельным вопросам, связанных с ограничением применения сроков давности.

THE EFFECTS OF EXEMPTION FROM CRIMINAL LIABILITY AT THE END OF THE PERIOD OF LIMITATION

Anna Khachatryan
Senior Lieutenant of Police, Commander of the second platoon of the Police Company, Security Department of the Underground Station after Karen Demirchyan of Yerevan Police Department

In the article a number of issues are studied, related the effects of exemption from criminal liability at the end of the period of limitation. The author analyzed the circumstances preventing the effects of exemption from criminal liability at the end of the period of limitation, provided for in criminal law. In the article the following circumstances prevent the effects of exemption from criminal liability are analyzed: interruption of criminal liability at the end of the period of limitation suspension or restriction of the statute of limitations. In the final part of the article the author presents his own position on certain issues relating to the limitation of the application of limitation periods.

Բանալի բառեր - *քրեական օրենսգիրք, քրեական պատասխանատվությունից ազատել, վաղեմության ժամկետներ, խոչընդոտող հանգամանքներ, վաղեմության ժամկետների կասեցում և ընդհատում, վաղեմության ժամկետների կիրառման սահմանափակումներ:*
Ключевые слова: *уголовный кодекс, освобождение от уголовной ответственности, сроки давности, факторы, препятствующие приостановлению и прерыванию исковой давности, ограничения по применению исковой давности.*
Key words: *criminal code, exemption from criminal liability, limitations, obstacles to the suspension and interruption of limitation, restrictions on the application of the limitation period.*